

## Հազարամյակի մարտահրավերների կորպորացիա

---

23 հունվարի, 2006թ.

### Հազարամյակի մարտահրավերների կորպորացիան պատասխանում է ՀՀ նախագահին ու արտգործնախարարին

Վաշինգտոն – 2005թ. դեկտեմբերի 19-ին Հազարամյակի մարտահրավերների կորպորացիայի (ՀՄԿ) տնօրենների խորհուրդը հավանություն տվեց 5 տարի տևողությամբ ու 235.65 միլիոն ԱՄՆ դոլար արժողությամբ հայաստանյան ծրագրին, սակայն մտահոգություններ հայտնեց Հայաստանում սահմանադրական բարեփոխումների նոյեմբերին կայացած հանրաքվեի ժամանակ տեղ գտած խախտումների վերաբերյալ: ՀՄԿ գլխավոր գործադիր տնօրեն դեսպան Ջոն Դանիլովիչը այս մտահոգությունները ներկայացրեց ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանին ուղղված իր նամակում՝ կոչ անելով ՀՀ կառավարությանը ձեռնարկել լրացուցիչ քայլեր ցույց տալու իր նվիրվածությունը Հազարամյակի մարտահրավերների ծրագրի մասնակցության հիմնարար սկզբունքներին, որոնք ներառում են արդարացի կառավարումը, մարդկային կապիտալում ներդրում կատարելը և տնտեսական ազատությունը խրախուսելը:

Վերջերս ՀՀ արտգործնախարար Վարդան Օսկանյանը պատասխանեց դեսպան Դանիլովիչի նամակին՝ վերահաստատելով Հայաստանի նվիրվածությունը Հազարամյակի մարտահրավերների ծրագրի սկզբունքներին: Նախարար Օսկանյանի նամակի ամբողջական տեքստին կարող եք ծանոթանալ այցելելով հետևյալ էջը.

[http://www.armeniaforeignministry.com/pr\\_06/060112\\_washington.html](http://www.armeniaforeignministry.com/pr_06/060112_washington.html)

Դեսպան Դանիլովիչը առաջարկել է ՀՄԿ խորհրդին շարունակել ու ստորագրել Հայաստանի հետ համագործակցության ծրագիրը: Նախագահ Քոչարյանին ուղղված իր հունվարի 18-ի նամակում դեսպան Դանիլովիչը հստակ նշում է, որ ՀՄԿ-ը շարունակելու է հատուկ ուշադրություն դարձնել «արդարացի կառավարման» ասպարեզում ՀՀ կառավարության գործունեությանը:

###

Հազարամյակի մարտահրավերների կորպորացիան ԱՄՆ պետական գերատեսչություն է, որն աշխատում է աշխարհի ամենաաղքատ երկրների հետ՝ հիմնվելով այն սկզբունքի վրա, որ օժանդակությունն առավել արդյունավետ է, երբ տնտեսական աճի խթանումն ու ծայրահեղ աղքատության վերացումը իրականացվում է լավ կառավարման, տնտեսական ազատությունների ու մարդկային կապիտալի ոլորտում ներդրումների ամրապնդման ճանապարհով:



# Millennium Challenge Corporation

Reducing Poverty Through Growth

Ջոն Դանիլովիչ  
Գլխավոր գործադիր տնօրեն

18 հունվարի, 2006թ.

Հայաստանի Հանրապետության նախագահ  
Ն.Գ. Ռոբերտ Քոչարյանին

Մեծարգո Նախագահ Քոչարյան,

Ուզում եմ շնորհակալություն հայտնել Ձեզ ու արտգործնախարար Վարդան Օսկանյանին համապատասխանաբար 2005 թ. դեկտեմբերի 22-ի ու 2006թ. հունվարի 12-ի նամակների համար:

Ինչպես նշված էր դեկտեմբերի 16-ի իմ նամակում ՀՄԿ տնօրենների խորհրդի որոշումը Հայաստանի հետ համագործակցության ծրագիրը հաստատելու վերաբերյալ ձգձգվում էր նոյեմբերի 27-ին կայացած սահմանադրական բարեփոխումների հանրաքվեի ժամանակ տեղի ունեցած խախտումների շուրջ առկա մտահոգությունների պատճառով: Այդ խախտումները ամենայն հավանականությամբ բացասաբար կանդրադառնան Հազարամյակի մարտահրավերների ծրագրի Հայաստանի մասնակցության իրավասության ցուցանիշների վրա, մասնավորապես «արդարացի կառավարում» ենթախմբի մասով: Իմ նամակում ես առաջարկում էի մի շարք քայլեր, որոնք ՀՀ կառավարությունը կարող է ձեռնարկել ի ցույց դնելու իր նվիրվածությունը այն հիմնարար սկզբունքներին, որոնք հնարավորություն են տալիս, որ Հայաստանը օժանդակություն ստանա Հազարամյակի մարտահրավերների ծրագրից:

Կարդալով Ձեր նամակը ես ուրախությամբ նկատեցի Ձեր կառավարության պատրաստակամությունը շարունակել ժողովրդավարական բարեփոխումները, որոնք էական են լավ կառավարման համար: Ձեր նամակից հետո նախարար Օսկանյանից ստացված նամակում առավել մանրամասներ են ներկայացվում նշված խախտումների բնույթի վերաբերյալ ու հիշատակվում են այն քայլերը, որոնցով ՀՀ կառավարությունը վերահաստատելու է իր նվիրվածությունը լավ կառավարման ոլորտում բարելավումներ կատարելու իր պարտավորությանը ընդհանրապես: Մասնավորապես հուսադրող է այն, որ նա ընդունում է, որ հանրաքվեն «կասկածի ու խախտումների առիթ» է դարձել և ինձ ոգևորում է այն հանգամանքը, որ Ձեր կառավարությունը պատրաստ է հետամուտ լինել ընտրակեղծիքների ու լրագրողների նկատմամբ բռնության դեպքերին, ինչպես նաև պատրաստ է ընդունել արտաքին օժանդակությունը՝ ուղղված ուսուցմանը ընտրությունների նախապատրաստման, կազմակերպման ու մոնիտորինգի հարցերում:

Ես սպասում եմ, որ հունվարի 12-ի նախարար Օսկանյանի ինձ ուղղված նամակը դառնա հրապարակային: Ես կարծում եմ, որ այս գործողությունները միասին վերցված հանդիսանում են քայլ ճիշտ ուղղությամբ, ու ինձ համար հանդիսանում են բավարար հիմք, որպեսզի ես ՀՄԿ խորհրդին առաջարկեմ շարունակել ու ստորագրել Հազարամյակի մարտահրավերների ծրագրի շրջանակում Հայաստանի հետ համագործակցության ծրագիրը: Այնուամենայնիվ, մենք շարունակելու ենք հետևել զարգացումներին, հատկապես ուշադրության կենտրոնում պահելով Ձեր կառավարության գործունեությունը «արդարացի կառավարման» ասպարեզում: Ինչպես դուք գիտեք, ցուցանիշների նշանակալի շեղման կամ Հայաստանի մասնակցության իրավա-


սուրճան սկզբունքներին հակասող գործողությունները կարող են հանգեցնել ծրագրի կասեցմանը կամ դադարեցմանը, եթե անգամ ծրագիրն արդեն իրականացման փուլում է:

Կրկին շնորհակալություն եմ հայտնում Ձեր և նախարար Օսկանյանի նամակների համար ու սպասում եմ ծրագրի ստորագրմանը:

Հարգանքով՝

Ջոն Դանիլովիչ

Գլխավոր գործադիր տնօրեն

A handwritten signature in black ink, appearing to read "John Danilovich". The signature is fluid and cursive, with the first name "John" and the last name "Danilovich" clearly distinguishable. The signature is positioned below the typed name and title.